

րին կ'ըլլայ ճիշտ գաղափար մ'ունենալ երուսաղեմի առջի դրից վրայ:

Հին երուսաղեմին վրայ ունեցած տեղեկութիւննիս այս է, որ երեք բլուրոյ վրայ շինուած էր. որոյ մին հաւաքային արեւմտեան կողմն կ'իյնար, որ աւելի ընդարձակ և բարձր էր, և կ'ըսուէր լեւան Սիոն, որոյ վրայ Եբուսացիք բերդ մը շինած էին: Հանդէպ աւսոր, հիւսիսային տրեւելեան զին նուազ բարձր աղեղնաձև ուրիշ լեռ մ'ալ կար, որ Ս. Գրոց մէջ մասնաւոր աւանդ մը չունի, որ աւելի ետքը Աքրա բռնուեցաւ. և այս լեռան կողմէն Դաւթի թագաւորութենէն վերջը քաղաքը շատ տարածուեցաւ: Ասոր հարաւային արեւելեան կողմը երրորդ լեռ մ'ալ կար որ կ'ըսուէր Մորիա, որոյ վերայ շինուեցաւ Տաճարը: Սիոն և Մորիա լեռանց մէջ հովիտ մը կար, որ զիրենք իրարմէ կը բաժնէր. կար ուրիշ ընդարձակ հովիտ մ'ալ ընդ մէջ Աքրա և Մորիա լեռանց: Սիմոն Մակաբէ Աքրա պզտի քաղաքը կործանեց. լեցընել տուաւ հովիտը, և հաւասարեց Մորիա և Աքրա լեռանց գագաթունքը, անանկ որ երկուքէն մէկ լեռ մը ձևացաւ: Մորիա 'ի սկզբան անկանոն և պզտի լեռ մ'ըլլալով, չէր կրնար տանել տաճարին հետ վերաբերութիւն ունեցող բոլոր շէնքերն. ուստի Սողոմոն վարի հովտին արեւելեան կողմը զօրաւոր պարիսպ մը շինել տուաւ 400 խորանարդ բարձրութեամբ. և անոր ներսէն հողը բարձրացընելով ընդարձակեց լեռան տարածութիւնը: — Ամենեին ստոյգ տեղեկութիւն մը չունիմք թէ երուսաղէմ ինչ աստիճանի ամրութիւն ունէր, քաղաքէացւոց զայն բոլորովին կործանելէն առաջ: Միայն Ս. Գրոց և առաւելապէս Նեեմայ գրքին մէջ շատ տեղ երուսաղեմայ այլ և այլ դրանց յիշատակութիւններ կ'ըլլան. ինչպէս դուռն Հեղեդատի, դուռն Ադքեր, դուռն Աւազաւնաց, դուռն Հիւն, դուռն Զորոյն, դուռն Մոխրոյն, դուռն Անկեւան, դուռն Զորոյն, և այլն: Գլխաւոր շէնքերն էին Տաճարը, զոր շինեց Սողոմոն. Սիոնի

բերդը կամ Դաւթի քաղաքը. Սողոմոնի պալատը: Ս. Գիրքը երուսաղեմի ճամբաներուն մէկուն անունը միայն մեզի հասուցած է. և թալմուտը նաև քանի մը վաճառանոցներ կը յիշատակէ: Ահա այսչափ է հին երուսաղեմի վրայ ունեցած տեղեկութիւննիս. պարիսպք և բերդք, տաճարն, պալատք և տունք ամենայն ինչ կործանեցան և Նաբուգոդոնոսորայ զօրաց աւար եղան, և ոչ բան մը մեզի հասաւ:

Բաբելոնի գերութենէն ետքը նորէն շինուելով, տեսաւ երուսաղէմ իր տաճարին վերականգնումը. և անոր հետ տանց, պարսպաց և բերդից շինութիւնը: Ժամանակակից պատմագիրք շատ շէնքեր կը յիշատակեն զարմանալով իմն անոնց զեղեցիկ ճարտարապետութեան վրայ: Ասոնց մէջ առաջինն է երկրորդ անգամ շինուած տաճարը, Հերովդեսայ թագաւորական պալատը, որ բոլոր սպիտակ մարմարիոնէ շինուած էր, որ իր զեղեցիկ պարտէզներովն, աւազաններովն և ջրմուղներովն կը գրաւէր Սիոն լեռան բոլոր արեւելեան կողմը: Յովսէպոսի նկարագրած մէջէ մէջ երեք կարգ 164 աշտարակներով պարիսպը կը ցուցընէ թէ ինչպիսի մեծութեան հասեր էր երուսաղէմ: Բայց շատ քիչ տեսցայս փառաց ժամանակը. Հռովմայեցիք կրկին անգամ աւելի ահաւոր կերպով կործանեցին զայն, և « Ոչ մնաց քար 'ի քարի վերայ »:

Կը շարունակուի:

ՀՌՈՎՄԱՅ ՍԿԶԲՆԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ ՈՒ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ

(Տես Հատ. ԻԹ. Երես 364.)

Գ.

Թէ ինչպէս կրցան մեծնալ Հռովմայեցիք:

Այս ժամանակներս՝ զրեթէ ամեն եւրոպիոյ ժողովուրդները նոյն արուեստները, համոնման ղէնքեր, մի և նոյն

կրթութիւնը, և իրարու նման պատե-
րազմելու կերպ ունենալով, Հռովմա-
յեցւոյ հրաշալի բաղդը՝ մեզի անխա-
նայի կու գայ: Ասկից զատ ուժոյ մեծ
անհաւասարութիւն ըլլալով, անկարե-
լի է որ պղտիկ տէրութիւն մը նախա-
խնամութե՛ք զինքը դրած խոնարհ վի-
ճակէն իր բուն զօրութեամբը ելլէ:

Այս բանիս վրայ պէտք է մտածենք,
ապա թէ ոչ դէպքերը կը նշմարենք ա-
ռանց ըմբռնելու. և վիճակաց տարբե-
րութիւնը լաւ չզգալով՝ հին պատմու-
թիւնը կարգացած ժամանակնիս՝ կըր-
նայինք կարծել թէ մեզմէ տարբեր
մարդիկ կան:

Շարունակ փորձ մը Եւրոպիոյ մէջ
ցուցուց, թէ մէկ միլիոն հպատակ ու-
նեցող իշխանը՝ առանց ինքզինքը կոր-
ծանելու՝ տասը հազար զօրաց բա-
նակէ աւելի չի կրնար պահել. ուրեմն
մեծ ազինք միայն զօրաբանակներ ու-
նին:

Հին հասարակապետութեանց մէջ
ասանկ չէր. վասն զի զինուորաց ժողո-
վրդեան հետ արդի համեմատութիւ-
նը, որ հարիւրին մէկ է, զիւրութեամբ
ութիւն մէկ կրնար ըլլալ այն ատեն:

Հին հասարակապետութեանց հի-
մնարկողք երկիրները հաւասարապէս
բաժնէր էին. մի միայն այս բանս զօ-
րաւոր ժողովուրդ՝ այսինքն աղէկ կար-
գադրուած ընկերութիւն և ընտիր բա-
նակ կը յօրինէր, ամենայն որ հաւա-
սարապէս մեծ շահ ունենալով հայրե-
նիք պաշտպանելու: Երբ օրէնքները
խստիւ չէին պահուեր՝ ամեն բան մեր
հիմակուան վիճակին կը դառնար. ու-
մանց ազահութեամբ՝ այլոց ալ շուայլու-
թեամբ, երկիրները մէկ քանի անձանց
ձեռքն ամբողջութեամբ. և արուեստը
նախ մտան՝ թէ մեծատանց և թէ աղ-
քատներուն պիտոյիցն համար: Ուսկից
հետեւեցաւ որ ոչ քաղաքացի և ոչ ալ
զինուոր մնաց. վասն զի երկիրները որ
այս վերջին ապրեցնելու սահմանեալ
էին, յետոյ այս նոր կալուածատեարց
զեղխութեանը գործիք եղող գերիներն

և գործաւորքը պահելու կը ծառայէին,
առանց որոց Տէրութիւնը, որ անկաւ-
գութեամբն հանդերձ կը դիմանայ՝ կ'որ-
ծանած կ'ըլլար: Բարուց ապականու-
թենէն առաջ՝ Տէրութեան նախկին ե-
կամուտքը զինուորաց այսինքն երկրա-
գործներուն կը բաժնուէր. երբ հասա-
րակապետութիւնը զեղծաւ, նախ հա-
րուատներուն կը տրուէր, որք արուես-
տագործաց և գերիներուն կը հատու-
ցանէին, և մէկ մասը կ'առնուէին զի-
նուորաց ապրուստին համար, հարկա-
ժողովի առթով:

Արդ այս տեսակ մարդիկ պատերազ-
մի յարմար չէին, վատասիրտք էին, և
քաղաքաց զեղխութենէն և շատ ան-
գամ ալ իրենց բուն արուեստովն իսկ
արդէն մեղկացեալ. յատուկ հայրենիք
չունենալուն՝ և ամենուրեք իրենց ա-
րուեստը վայելելով՝ կորսնցուցածնին
կամ շահածնին ոչինչ բան էր:

Թագաւորաց՝ վտարուելէն ետքը,
Հռովմ եղած աշխարհագրին մէջ, և
Դեմետրիոս փաղերացւոյն յԱթէնա²
ըրածին մէջ գրեթէ նոյնչափ ժողովուրդ
գտնուեցաւ. Հռովմ չորս հարիւր քա-
ռասուն հազար՝ Աթէնքն ալ չորս հա-
րիւր երեսուն և մէկ հազար ունէր: Բայց
այս աշխարհագիրը Հռովմայ ճիշտ զօ-
րութեանը ժամանակը կ'ըլլայ, մինչդեռ
Աթէնքինը իրեն սաստիկ մեղկութեանը
ժամանակն էր: Տեսան որ երիտասարդք
Հռովմայ բնակչաց չորրորդ մասն էին և
յԱթէնա քսաներորդէն քիչ մ'աւելի
պակաս. ուրեմն Հռովմայ ոյժը այն այլ
և այլ ժամանակաց մէջ՝ Աթէնքին նա-
յելով էր իբրեւ քառորդ մը քսաներորդ
զի համեմատութեամբ, այսինքն հինգ
անգամ աւելի մեծ:

Ազիս և Կղէոմենէս Թագաւորները՝
տեսնելով որ Լիկուրգոսի³ ժամանակին

¹ Դիոնեսիոս Արիկառնացւոյն Թ Գրքին Եօգ.
25ին մէջ ըսած աշխարհագիրն է, որ կարծեմ թէ
ճորդ գրքին վերջը յիշածն է և որ Թագաւորաց
բշուելէն տասն և վեց տարի վերջը եղաւ:

² Կատակլէս, յԱթէնական Գիրք Զ. Գլ. ԺԹ:

³ Բուն Սպարտայի կոչուած քաղաքացիքն էին:
Լիկուրգոս ինն հազար բաժին ըրաւ իրենց հա-

պէս ինն հազար քաղաքացի ըլլալու տեղ հազիւ եօթն հարիւր կար՝ որոնց մէջ հարիւրը երկրատէր¹ էին և բոլոր մնացածը վատասիրտ սինքոր ժողովուրդ, այս նկատմամբ² օրէնքներ դնելու սկըսան, և ասով Լակեդեմոնը իր առջի զօրութիւնն ստացաւ և դարձեալ ահարկու եղաւ համայն Յունաց:

Երկիրներուն հաւասար բաժանմամբն է՝ որ Հռովմ իր խեղճութենէն ելլելու կարող եղաւ, և այս բանս՝ մեղկացած ատենը զգալի եղաւ:

Պղտիկ Հասարակապետութիւն էր՝ երբ Լատինացիք խոստացած զօրացը օգնութիւնը չուզելով տալ, քաղաքին³ մէջ շուտով տասը լէգէոն ղինեցին: «Հազիւ հազ այսօրուան օրս, կ'ըսէ Տիտոս Լիւիոս, Հռովմ՝ զոր աշխարհս բովանդակ կարող չէ ամբողջել, ասոր նմանը կրնայ ընել եթէ զրանցը դիմաց երևայ թշնամին. յայտնի նշան թէ ամենեւին չենք մեծցած, և թէ պարզ զմեզ քայքայող զեղխութիւնն և հարբս տութիւնքը աւելցուցած ենք »:

«Ըսէք ինծի, կ'ըսէր ազնուականաց⁴ Տիբերիոս Կրաքքոս, որը լաւագոյն է. քաղաքացի մը՝ թէ մշտնջենաւոր ըստրուկ մը, զինուոր մը թէ պատերազմի անյարմար մարդ մը: Ուրիշ քաղաքացւոցմէ քանի մը արտավար երկիր ունենալու համար կ'ուզէք աշխարհիս մնացած մասին տիրելէն յոյսերնիդ կըտրել. և կամ մեզի չի տուած երկիրնիդ թշնամեացմէ յափշտակուելու վրտանգին մէջ դնել:

մար երեսուն հազար ուրիշ քաղաքացւոց տուաւ: Տես Պլուտարքոս Կենսագրութիւն Լիւիւսիէայ:

1 Տես Պլուտ. Կենսագր. Ագիոյ և Կլեոմէնայ:

2 Տես նոյնը:

3 Տիտոս Լիւիոս Տանեակ Ա. Գիրք Է: Հռովմայ առնուելէ քիչ մ'ատեն ետքը եղաւ այս. Լ. Փուրիոս Կամիլլոսի և Ապպիոս Կլաւտիոս Կրասսոսի հիւպատոսութեանն ատեն:

4 Ապպիանոս Յաղաթի Քաղաքական պատերազմն. Գիրք Ա. Գլ. ԺԱ:

ԳԼՈՒԽ Գ.

Գաղղիացիք: Պիւտոս: Զուգակշռութիւն Կարքիոսի և Հաովմայ: Սենիքադայ պատերազմը:

Գաղղիացւոց հետ շատ պատերազմներ ունեցան Հռովմայեցիք: Երկու ազգերն ալ նոյնպէս փառասէր էին, նմանապէս զմահ կ'արհամարհէին և յաղթելու յամառք էին, այլ տարբեր զէնքեր ունէին: Գաղղիացւոց վահանը պզտիկ էր և տեղերնին ալ գէշ. այս պատճառաւ ինչպէս Սպանիացիք Մեքսիքացւոց հետ վարուեցան այս վերջին դարերուս մէջ, գրեթէ նոյնն եղաւ իրենց ալ: Եւ զարմանալին այն է որ Հռովմայեցւոց ամեն տեղ և ամեն ժամանակ ընդդիմակաց ժողովուրդներն՝ մէկիկ մէկիկ ամէնքն ալ թողուցին մէկզմէկ որ կործանին, առանց իրենց դժբաղդութեանցը պատճառը գիտնալու, քննելու և կամ դէմն առնելու:

Հռովմայեցւոց իրեն ընդդիմանալու և յաղթութիւններէն օգուտ քաղելու կարող եղած ատեններն էր որ Պիւտոս եկաւ իրենց դէմ պատերազմ բանալու. սորվեցուց իրենց ամրանալու կերպը, բանակ յարդարեւն և բանակատեղ ընտրելը, փղերուն վարժեցուց, և պատրաստեց զիրենք մեծագոյն պատերազմաց¹:

Պիւտոս միակ անձնական ձիրքերովը մեծ² էր: Պլուտարքոս մեզի կ'ըսէ

1 Պիւտոսի պատերազմը Հռովմայեցւոց խելք բացաւ. այնպիսի փորձառու անոյեանի մը դէմ. առաջուրնէ աւելի ճարտար և հմուտ եղան: Առաջին ճակատամարտին մէջ իրենց լէգէոններուն մէջ խառնակութիւն ձգող փղերէն պաշտպանուելու հնարքը գտան. դաշտային տեղեր խուսափեցին և յարմար կողմեր փնտռեցին հեծելազօրաց դէմ, զոր առաջ այնչափ յանդգնաբար արհամարհէր էին: Յետոյ իրենց բանակը Պիւտոսի նման կազմել սորվեցան, անոր զօրաց կարգին և ընտրութեանը սքանչանալով, մինչդեռ իրենց մէջ ամեն բան խառնաշփոթ էր: Սենեքէրճոն, Խորհրդածոմիտի Հռովմայեցւոց հասարակագէտութեան զանազան տպէն ունեցած ճարտարութեանցը լեզուայ:

2 Տես Գիրք Գ. Ա. հատակոտորքը, Առաքի. Կոնսթանց և Դուլմէտեց քաղաւածոցը մէջ:

Թէ ունեցած¹ ութ հազար զինուորն և հինգ հարիւր ձիերը պահել չկարենալուն համար էր որ Մակեդոնական պատերազմը ըրաւ: Այս պզտիկ Տէրութեան թագաւորը, որուն մահուը նէն ետքը ալ վրան չխօսուեցաւ, նորանոր արշաւանք ընող բախտախնդիր մ'էր, վասն զի միայն արշաւելով էր որ իր զօրութիւնը կրնար տեւել:

Իրեն գաշնակից Տարենտոնը լակեղեմոնացի² նախնեացը օրինադրութիւնը կերպարանափոխ ըրեր էր: Շատ մեծ բաներ ըրած կ'ըլլար Սամիթացոց հետ, այլ Հոովմայեցիք զանոնք անհետ ըրեր էին:

Կարքեդոնը Հոովմէն աւելի կանուխ հարստացած ըլլալով, աւելի շատ ալ զեղծաւ. զոր օրինակ, մինչդեռ Հոովմ' ամենքն հասարակաց պաշտօններու միայն առաքինութեամբ կը հասնէին, մի միայն պատուոյ և աշխատանաց նախամեծարութեամբ, Կարքեդոնի մէջ հասարակութեւն առանձնականաց տուածը վճարմամբ էր, և քաղաքացոց բոլոր մատուցած ծառայութիւնքը հասարակաց ստակովը կը հատուցուէր:

Որչափ որ վեհապետի մը բռնաւորութիւնը Տէրութիւնը քայքայման վիճակի կը ձգէ, այնքան ալ նման բախդի կը հանդիպի այն հասարակապետութիւնը՝ յօրում հասարակաց բարւոյն նկատմամբ անհոգութիւն կը տիրէ: Եկամտից աղէկ մատակարարութեամբն է որ ազատ կառավարութիւն մը նախամեծար կը համարուի. բայց եթէ աւելի գէշ ալ ըլլայ մատակարարութիւնը, դարձեալ Ազատ Տէրութիւն ընտրելագոյն է՝ մարդահաճոյ շողմարարներ չունենալովը. բայց եթէ անոր հակառակ և փոխանակ վեհապետին բարեկամացն և ազգականաց պէտք ըլլայ տէրութեան գլխաւորաց ազգականքը և բարեկամքը հարստացընել այն ատեն ամենայն ինչ կորսուած է. չարագոյն վախճան և աւերումն կ'ունեն.

նան օրէնք՝ երբ թագաւորն ինքնին օրինադանց կ'ըլլայ, որ Տէրութեան առաջի քաղաքացին ըլլալով անոր պահպանութեանը աւելի մեծագոյն շահ ունի:

Հին սովորութիւնք, աղքատութեան վարժութիւն մը, Հոովմայ մէջ հարբստութիւնը հաւասար կը պահէին, այլ 'ի կարքեդոն առանձնականք թագաւորապէս ընչեղք էին:

Կարքեդոնի մէջ տիրող երկու կողմնակցութեանց՝ մին միշտ խաղաղութիւն կ'ուզէր, միւսն ալ անդադար պատերազմ կը պահանջէր. անանկ որ հոն, անկարելի էր ոչ մէկը վայելել և ոչ զմիւսը յաջողութեամբ կատարել:

Թարգ. Կ. Ր.

Կը շարունակուի:

ՅՈՒՅԱԿ

ԳԻՏՈՒԹԵԱՆՑ ԵՒ ԱՐՈՒԵՍՏԻՑ ՅԻՏԱԼԻԱ

ՎԵՅԵՐՈՐԴ ԴԱՐԷ ՄԻՆՁԵՒ Ի ՄԵՐ ԺԱՄԱՆԱԿՍ

(Տես երես 24.)

Բ. Յեղանակ (1073-1499).

Հիլտեպրանտի ատեն և անկէ ալ առաջ շատ աստուածաբանք, իմաստասէրք և դպրոցականք՝ մեծ անուն հանած էին. որոց մէջ յիշեցինք զՍ. Անսելմոս եպիսկոպոս Լուկայ, Լանկֆրանկ Բաւիոյ՝ որ Նորմանտացի կրօնաւոր մ'էր, բարեկամ Աշխարհական Գուլիելմի, և ասոր ձեռքով կանդորբերայ արքեպիսկոպոս անուանուած. ինչպէս էր նաև Ս. Անսելմոս Աոսդայ, որուն փիլիսոփայական գերազանցութեանը կը վկայեն արդի իմաստասէրք ալ: Պետրոս Լուկայրոս Բարիգու եպիսկոպոսն, վճռոց վարդապետ մականուանեալ (1164), Պետրոս Գոմեսոր (1198), Իննովկենտիոս Գ. Պապ (1216), մեծն Ս. Պոնապետիս (1221-1274),

¹ Կենսագրութիւն Պիտագորասի:

² Յուստինոս, Գիրք 20. Գլ. Ա: